



ԲԱԶՄԱՎԵՊ

Ո-ՑԺԵ · 1866 — ԳՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ · — ՅՈՒՆԻՍ

ԵՐԱԶ ՎԱՐԴԱՆ ԿԱՅՍԵՐ

(3 յունիս 713)

Սովորաբար քնացողքն կարծուին երազատես, բայց բարոյապէս խօսելով արթնութեան ատեն երազ տեսողք աւելի շատ են, երբ չըլլարու կամ շատ անսույգ ու դիպուածական կամ շափազանց բաներ կու մոտածեն, կու յուսան, կ'ուզեն կամ կ'ատեն։ Այսպիսի քուն կամ երազն ալ գրեթէ բնական քնոյ և երազի պէս հասարակ է մարդկան, թէ և ոմանք քիչ ոմանք շատ տեսնեն. իսկ իր ազգեցութիւնն աւելի զօրաւոր է իր բերած երբեմն ուրախութեամբն և շատ հեղ տիրութեամբը։ Բան մը երազել փափագով և յուսով և գտնել զայն, մեծ բաղդ մեծ ուրախութիւն է. երազել և չգտնել՝ տիրութիւն է. առանց երազելու՝ գտածը կորուսանել՝ աւելի մեծ և ստոյգ տիրութիւն է. իսկ երազել և գտնել, յետոյ դարձեալ այն փափագած և գտածը ե-

րազի պէս կորուսանել՝ տիրութենէ ալ վեր է, ցաւալի ավշութիւն է։ Այս պիսի է մեր պատմելու երազն ալ. որուն նման սաստիկ՝ իրաւ քիչք երազած և կրած են, բայց շատեր կան որ պզտի չափով մ'ասոր կու նմանին, գոնէ երազին մէկ մասովլը։ Երկրաւոր փառաց և բարդի յեղափոխութեանց մեծագոյն օրինակ մը ցուցընելով կրնայ ամենուն խրատ ըլլալ վարդան կայսեր երազը։

Այս վարդանս ինքնին երազեալ, այսինքն մուացածին կամ առասպելեալ անձ մը չէ, այլ սոսոյգ և պատմական, թէ ինքն և թէ իր գլխաւոր երազն. քեզի ազգակից է, Հայկակ, և Յունաց կոստանդնուպօլսի կոյսերաց թագակից, Ը գարուն սկիզբը։ Երբոր մեծին կոստանդիանոսի ցեղին պայազատութիւնն հատաւ մահուամբ փոքր թէու-

դոսի և անոր քեռառն Մարկիանոս կայ-
սեր, կայսերութիւնն զօրաւոր կամ բըռ-
նաւոր իշխանաց ձեռք ընկաւ՝ (աւելի
թրակացի իշխանաց), որը դար ու կէս
տիրեցին. ասոնց վերջնթերն Մօրիկ
կայսր՝ ըստ մեր պատմչաց՝ Հայ էր, յօ-
շական գեղէ Արագածոտն գաւառուն.
զասոր յաջորդ Փոկասը սպաննելրվ ա-
նուանին Հերակլ կայսր՝ յափշտակեց ըզ
թագը և ժառանգեցուց իր ցեղին ամ-
բողջ դար մը. բայց որովհետև թէ ին-
քըն թէ իր նախորդաց շատերն յա-
փշտակող եղեր էին, և իր յաջորդքն
ալ անարժան և ժողովրդեան անսիրելի
էին, թագախնդրութիւնն կամ կայսե-
րութեան փափագն և կոփին՝ սովորա-
կան բան մ'եղաւ զօրաւոր և ճարպիկ
իշխանաց: Ասոնց մէջ՝ եթէ ոչ շատու-
թեամբ թուոյ՝ բայց շատութեամբ ար-
դեանց և ուժոյ՝ նշանաւոր էին դրեթէ
բոլոր Ե-ՃԸ, դարուց միջոց մեր համազ-
գի Հայ իշխանաւորքն և զօրավարքն՝
Կ.Պօլսի ինքնակալաց ծառայութեան
մէջ, ինչպէս յայտնի է ամենայն պատ-
մագիտաց. ապա զարմանք չէր եթէ ի-
րենք ալ՝ (որ Յունաց կայսերութեան
մէջ մեծամեծ պաշտօնակալք կամ կու-
սակալք և զօրավարք էին, և յունարէ-
նը իրենց երկրորդ մայրենի լեզու ըրեր
էին), բնիկ Յոյն իշխանաց հետ կայսե-
րական թագին փափագող կամ յա-
փշտակող ըլլային. մանաւանդ որ շատ
հեղ իրենցմէ առաջ՝ թէ ազգային թէ
յոյն զօրքն և իշխանքն իրենց կ'ընծայէին
թագը: Արդէն Հերակլ վերջին պայա-
զատաց ատեն մէկ երկու այսպիսի ան-
ձինք փորձ փորձեցին, թէ և ոչ յաջո-
ղեցան. ինչպէս Շապուհ մը ամատու-
նի կամ պարսիկ, որ երբեմն արևմը-
տեան Հայոց զօրավար կամ իշխան էր,
և յամին 667 թ կոստանդ (թուոն Հե-
րակլի) կայսերէն գլուխ քաշեց, բայց
դիպուածով մը շուտով մեռաւ (Ճիէն
ընկնալով): Հետևեալ տարին կոստան-
դը սպանողը իրենց կայսր ընտրեցին

1 Հայ Յունաց էր յԱրաքսոս. քաղաքէ Կա-
պատովիս, որ է ի Փոքր Հայս, և բուն ցեղն
Հոռվանյեցի էր, կ'ըսեն:

զՄժէծ, որ հաւանօրէն թուոն էր մեր
Մժէծ գնունի զօրավարին, որ Հերակլի
ատեն քաջութեամբ և խոհեմութեամբ
շատ անուանի էր. իսկ կայսր ընտրուած
Մժէծն աւելի երեսելի էր իր հասակին
մեծութեամբ և գեղեցկութեամբն, որոյ
համար ընտրեցին զսա սպաննելցյն հա-
կառակորդըն, և խոստացան պաշտպա-
նել. վասն զի ինքն Մժէծ կու հրաժա-
րէր և յանձն չէր առնուուր. և անննց տի-
րատեցութեան ալ զոհ եղաւ. և ոչ տա-
րի մը ակամայ կայսրութեան անու-
նը կրելով՝ թագին հետ իր թագագան-
գուր գլուխն ալ կորոյա (669), զոր Սիրա-
կուսայէն (Սիկիլիոյ քաղաքէ) խաւրեցին
'ի Կ.Պօլսի առ որդին կոստանդայ կոս-
տանդին Դ. սա թէ ծծնեամբ և թէ ար-
դեամբք արժանի ժառանդ էր աթոռոյն,
բայց անարժան հօրը նման անարժան
որդի մը յաջորդ ունեցաւ, այն է Յուս-
տինիանոս Բ: Ասոր անկարգութեանց,
անգթութեանց, և անկրօնութեան չդի-
մանալով իր ժողովուրդն՝ գահընկէց ը-
րին (695), և տեղը նստուցին Ղեւոնի
պատրիկ քաջ զօրավարը, որ Հայրե-
նեզք էր յիսաւրիոյ կեպիկիսյ, և հա-
ւանօրէն Հայ, ինչպէս էր անտարակոյս
իրմէ ոչ շատ տարի վերջը ընտրուող և
25 տարի (717-741) կայսր եղող լևոն Լևոն
իսաւրացին. (թէպէտ վարչովն և գործ-
քերովն իր նախորդէն՝ (Յուստինիանո-
սէն՝ պակաս զգուելի չեղաւ): Ղեւոնի
թէ և սիրելի և արժանաւոր անձն, բայց
իրեք տարիէն ետև (698) իրմէ բռնա-
գունի մը ձեռք ընկաւ. Ապսիմար ա-
նունով կոռիկոսցի մը տիրեց Կ.Պօլսոյ,
և Ղեւոնի քիթը կտրելով, (ինչպէս
Ղեւոնի ալ Յուստինիանոսին կտրեր էր)
փակեց վանքի մը մէջ, և ինք զինքն ա-
նուննեց Տիրեր Բ:

Այսպէս կայսերութեան կամ թա-
գին խաղալիկ եղած ատեն մեր Վար-
դանն այլ իր կայսերական երազը տե-
սաւ: Իր ինչ տոհմէ կամ տունէ ըլլայն
յայտնի չէ, թէ և յունաց Մամիկոնեան
կարծուի. անշուշտ այն Հայերէն էր որ
շատոնց Յունաց ծառայութեան մէջ
մտեր և յառաջացեր էին. իր հայրն այլ

յունական անուամբ Նիկեփոր պատրիկ կոչուէր . ինքն այլ զինուորութեան մէջ յառաջադէմ և ճարպիկ, լեզրաւանի և զուարթ մարդ մ'ըլլալով՝ սիրելի եղած էր ճանչուորներուն . և աւելի այս ձիրքերուն ուժով՝ քան թէ քնով կամ դինով հարրած ըլլալով՝ երազ մը տեսաւ, (յամին 701), որ իր կենաց մեծ և իրական երազին պատճառն եղաւ . տեսածն էր, ինչպէս ինքն պատմէր, արծիւ մը որ գլխուն վրայ կութօչուտէր . Անշուշտ ասիկայ նշան է, ըստաւ, որ օր մը ես կայսր պիտի ըլլամք: Եւ ինչպէս որ կ'երևէ՝ միայն զինուորական և աշխարհային բաներու հմտւած էր, արծիւ մը որ գլխուն վրայ կութօչուտէր . Անշուշտ ասիկայ նշան է, ըստաւ, որ օր մը ես կայսր պիտի ըլլամք: Եւ ինչպէս որ կ'երևէ՝ միայն զինուորական և աշխարհային բաներու հմտւած էր, աւելի հարրած կամ խարերայ մ'էր, միանդամայն և մոլորամիտ միակամմտաւան և երազագէտ մը, վարդանայ կերպարանքէն յստ առնըով որ իրաւ կրնայ օր մը կայսր ըլլալ, ինչպէս վերոյիշեալներն, Անտարակցոյս է ըստ կայսր ըլլալք . բայց (հայ-հոյանք մ'ալ աւելցուց) այս պայմանաւ Աստուած քեզի կու տայ կայսերութիւնը՝ որ եկեղեցւոյ Զըսուած տիեզերական ժողովը չնշես, այսինքն անոր հաստատած գաւանանքը: Վարդանան առանց առնիւն ետև մտածելու, խօսք տուաւ, որ եթէ կայսր ըլլայ՝ այնպէս ոնէ: Եւ երազէն աւելի այն սուտ մարդարէին հաւատալով և վստահանալով պատմեց իր մէկ բարեկամին եղածը և ըլլալիքը: Բարեկամն ալ որ ճգնաւորին պէս ցած մ'էր, ապագայ անստոյդ կայսերէին աւելի՝ ներկայ ստոյդ կայսերէին վարձք առնովը իրեն շահաւոր գտնելով՝ գնաց ասոր պատմեց լսածը: Ապսիմար մէկէն բանել տուաւ զլարդան, և խելի պէս ծեծելէն ետև՝ գլուխն ալ ածիելով շղթայի զարկած՝ պատորեց մինչև ՚ի կեփալընիա կղզի, Յունաստանի արևմտակողմը:

Վախնալու մահուանէ մըազատելով՝ վարդան՝ տասը տարի տաեն ունեցաւ իր երազին վրայ նոր նոր երազներ տես-

նելու և դեռ յուսով սպասելու, երբ իր պատորուելէն քանի մը տարի վերջ թուատինիանոսն Որինուումէւ, այսինքն Պընչատն (Քիթը կտրած) կատղած դաղանի պէս փախչելով իր արգելանէն՝ որ էր Քերանն քաղաքն Ղրիմու, նախ Խազրաց ապավինելով, ապա Բուղդարաց, և ասոնցմէ զօրք առնըով եկաւ պաշարեց առաւ իր հին թագաւորանիստ քաղաքը և թագը (705). բռնեց զԱպսիմար որ փախեր էր, և անոր նախորդ կենդ կայսեր հետ մէկտեղ բերելով, և ամեն խայտառակութիւն տալով, կրկիսին մէջ գետնի վրայ ձգեց կոխկըռտեց, մինչդեռ յիմարած ժողովուրդն սաղմուսին խօսքը իրեն յարմարցընելով կուպուշրտար. « ի վերայ իժի և քարրի » գնացես դու, զառիւծն (Ղետնդ) և » զվիշապն (Ապսիմար) առ ոտն կոխեա » ցես ». յետոյ ուրիշ գաղանաց ամիկիթէտորն մը տանել ու գլխատել տըւաւ զանոնք: Խոկ ինքն իր տգեղ կերպարանաց ծածկոց մը հնարեց, ոսկեղէն քիթ մը. զոր ամեն անդամ հանած ատեն, կըսեն, սոսկալի գաղանական կատաղութիւն մը կ'իմանար, և գաղանէ ատելի անդումթ և անկարծելի կոտորածներ ըրաւ՝ իր երկրորդ անդամ վեց տարի թագաւորութեանն ատեն. սատանայական լրբութեամբ մը Աստուծոյ գէմ երդուած էր իր ամեն հակառակորդներէն վրէժ առնով. և ոչ միայն անոնց, հապաշատ անմեղաց ալշարչար տանջանք և մահ հասուց. արիւնոտ աշացն առջև կրօնքը սրբազն բան չէր երեւէր. ոչ միայն կայսրութեան, այլ և մարդկութեան զզուանք և ցուցանք մ'եղաւ, ուսկից ամենքն գանէին և գողային: Եթու շարդելու չնշելու կ. Պօլիսի և անոր մօտ տեղերու մէջ իրեն թշնամի սեպածները, բոլոր ոխը դարձուց իր պատորանաց տեղւոյն (Քերսոնի) բնակչացը վրայ . որովհետեւ հոն անոնց մէջ եղած ատեն միշտ կու սպառնար թէ երբ ազատութիւն գտնեմ՝ ըզձեղ պիտի չարչարեմ, անոնք ալ ուզեցին զինքը հալածել, և հազիւ թէ փախեր էր անկէ. հիմայ բողոր նաւերը

ժողվեց և զամենքը ստիպեց որ դան յօդութիւն. ինչուան, կըսեն, 100,000 մարդ լցուց նաւերուն մէջ և զրկեց 'ի Քերտն, գլուխ գնելով Ստեփանոս անուամբ գաղանամիտ մարդ մը՝ զոր անողորմութեանն համար ամենկին (ասմիքոս) կոչտ կամ կատղած կոչէին, և պատուիրեց որ Քերտնի բնակչաց մէկն այլ ողջ շմոլու, և անոնց տեղը աքսորածներով լցուի: Այս աքսորելոց մէկն այլ ըրաւ երազատես վարդանը, կեփալսնիա կզզիէն հանելով և հոս քշելով:

Թողունք հոս յիշել Քերտնի մէջ եղած ահեղ կոտորածը, և անկէ ապրած ու նաւալ գէպ 'ի Կ. Պօլիս զրկուած տըղայոց և մարդկանց կորսուիլ նաւակոծութեամբ Սեւ ծովուն մէջ, որոց թիւր կըսեն (գուցէ չափաղանցօրէն) 63,000 էր, թէ և մէկտեղ սեպոին նաւաստիք և զօրականք. զիակնին հարիւրաւոր մզոններով հեռու ծովեզերըներ ծփարով զարմուեցան երկայն ատեն: կատազին Ստեփանոս՝ որ քան զՊնչատն նրաւազ կատղած էր, աչք գոցեր էր որ մաս մը՝ 'ի բնակչաց Քերտնի փախչին, և իրեն տեղ վերակեցու թողեր էր զԵղիս՝ կայսեր զինակիրը. երբ այս փախչողներն լսեցին որ Ստեփանոս նաւակոծեալ խեղեցաւ, ոկանն դառնալ իրենց ամայի հայրենիքը. բայց գաղանացեալ կայսրն այլ լսելով անոնց ապրիլ՝ նորէն զօրք խաւրեց վրանին. անոնք յետին յուսահատութեամբ զինուած, և խալզաց օգնութեամբ՝ ջարգեցին կայսեր զօրքը, և միաբերան անէծը ու նզուիք կարգալով այնպիսի հրէշի մը վրայ, ուղեցին զԵղիս (որ իրենց կողմը դարձեր էր) կայսր անուանել. ոս վախնալով հրաժարեցաւ: Ահա այն ատեն միաբանեցան և կայսր կանչեցին ու զրին զՎարդան, անունն այլ փոխեցին 'ի Փիլիպպիկոս, որ սիսու լսելով և գրելով ոմանք՝ Փիլիպպիկ անուանեն, անոնք Փիլիպպոս, և ունանք՝ 'ի մեր պատմաց այլ Փիլիկոս: Այս բանս եպաւ 714 տարւոյն վերջերը. Վարդանայ երազն ստուգուեցաւ, բայց ոչ բոլորու

վին և ոչ կարծածին չափ երկայն և յաջող:

Այս վայրկենէն եռև Յուստինիանոս կայսեր անդադարելի կատաղութիւնն և տագնապը նկարագրել զբեթէ անկարելի է, առջի զործքն եղաւ մէկէն վազել երթալ եղիայի տունը, անոր երկու անմեղ երեխայ աղայքը իրենց մօր զրկին մէջ ինքն իր ձեռքով սպաննեց, մայրերնին այլ մահուանէ աւելի մեծ նախատանաց մատնեց. յետոյ շտառով նոր նաւախուամբ մը կազմեց՝ ամենայն պատերազմնկան զործկներով լցուց, Մօրոս անուամբ մէկու մը յանձնեց սասափիկ սպաննալեօք որ երթայ զբերսոն հիմնայատակ ընէ, և ոչ մանր տղայոց խնայելով, անանկ որ ոչ կենդանի մնայ, ոչ չէնքի նշան մը, այլ վարուցանի տեղ դառնայ: Մօրոս տիրոջը բազանաց համեմատ շուտով հասաւ 'ի Քերտն, և սկսաւ պարիսպը ծեծել ու փլցընել. բայց յանկարծ խալզաց գունդ մը վրան հասաւ, զադրեցուց. Մօրոս տեսնելով որ կամ ասոնցմէ պիտի ջարդուի, կամ յետ դառնալով կայսեր բարկութեան զո՞ն պիսի ըլլայ, ինքն ալ Քերտնացուց կողմը գարձաւ, միացաւ անոնց հետ. նոյն միջոցին վարդան այլ խալզաց կողմէն գալով նոր զօրագնդով մը՝ նորէն կայսերական պատուով ընդունուեցաւ: Յուստինիանոս կու զարմանար իրնաւերէն լուր մը չառնուն, և կատկած ելով անհամբերութեամբ մնացեալ զօրքը ժողվեց, գունդմալ 'ի բուլզարաց օգնութիւն առաւ, և զնաց ցամաքէն մինչե 'ի Սինոպ. հոնկէ տեսաւ որ նաւասորմիղն առագաստաբաց կու գայ գէպ 'ի մայրագաղաքն. նաև մը խաւրեց ընդառաջ լուր բերելու. լուրն աս եղաւ որ աքսորեալն վարդան կայսր եղեր է և կու գայ Կ. Պօլիս վրայ: Հոս վերջին անդամ Յուստինիանու ու կի քիթն ընկաւ, և բոլորովին գազանացաւ. անհանգիստ և անգաղար վազեց գէպ 'ի մայրագաղաքն, բայց տեսաւ որ Վարդան իրմէ առաջ հասեր տիրեր է. նոյն երազութեամբ գարձաւ 'ի Դամատրիս' որ վայրկեղոնի (Դամար-

քէց) և Նիկոմիդիոյ (Խղնիմլս) մէջ՝
տեղն է, բայց հօն ալ վարդանայ վախն
և սուրբն հառեր էր . վասն զի հօս խառ-
րեր էր զեղիս, որ երբեմն իրեն տէրը
պաշտպանող զէնքերը անոր կենաց վրի-
ժակ ընէ. Եղիս տեսաւ որ այն իր կառ
զած հին տէրն պատրաստուեր է պա-
տերազմի, մօտեցաւ անոր Յոյն և Բուլ-
զար զօրաց, և խմացուց որ ինքն պատե-
րազմի համար եկած չէ, այլ զիրենք ա-
զատելուանանկ այլանդակհրէշիմը ձեռ-
քէ. և խոստացաւ նոր կայսեր շնորհք-
ները: Մէկէն իր կողմը դարձան գիմա-
ցի գոնզերն այլ. քթակոտոր կայսեր
ուրիշ բան չմնաց՝ բայց յուսահատ
փախուստ. ասկայն շուտով վրայ հա-
սու իր քաջ բայց տիրաննենդ զինա-
կերն (Եղիս), մազերէն բանեց քաշեց
և իր դաւաճան սրովն կտրեց այն գո-
ռով զլուխը՝ որ 26 տարիէ վեր տհով
գործվ և անբաւ արեամբ լցուցեր էր
զծով և զցամաք արեելեան ընդարձակ
կայսերութեանն, և խարեց առ Վար-
դան: Նոյնպէս սպանուեցաւ Յուստի-
նիանոփի տուածին պաշտօնեայն և գրլ-
խաւոր պատրիկն Վարազրակուր, որոց
անոնն յայտնէ թէ ազգաւ Հայ կամ
վրացի էր: — Մօրոսի և Յովիան ձընճ-
զուկ ըսուած մէկու մը յանձնուեցաւ՝
աւելի անգութ և սրտակուր գործ մը.
սպաննել զծիրեր՝ զորդին Յուստինիա-
նու. իրաւ հրէշի մը ձագ էր սա՝ բայց
զեռ անմիաս անմեղ ձագուկ մը, վեց
տարեկան, զոր մամն (Յնաստասիա)
փախուցեր էր Ա. Աստուածածնայ ե-
կեղեցի մը, և վրան զլուխը սրբոց նըշ-
խաբքներով լցուցեր էր, մէկ թաթի-
կովը խորանը բռնել տուեր էր, մէկա-
լովը Քրիստոսի աշխարհակեցոյց խաչին
կտոր մը. ինքն մամիկն ալ խորանին
գուան առջև պահապան կեցած՝ վայր-
կենէ վայրկեան կու սպասէր սրտամափ
ու վայրկենին. և ահա անսոլոմ դա-
հիճքն ներս թափեցան: Յնաստասիա
վազեց ընկաւ պլրւեցաւ Մօրոսի ոտ-
քերուն, լալով ճշալով ողորմութիւն
կու կանչէր. բոլոր տաճարն, կրնամք ը-
սել թէ բոլոր բնութիւնն իսկ ողորմու-

թիւն կու մուրար անմեղ վառնուկի մը
համար. բայց այն օրերը միայն մարդ-
կոնց սրտէն վերցուեր էր սրոզարմութիւնն.
մինչդեռ մամն Մօրոսի կու պաղատէր,
անզին անուանեալ ձնձլուկն գիշատիչ
անզդ դարձած՝ տղուն վրայէն սրբա-
զան մասունքները վերցընելով, և կէս
մ'ինքն իր վիզն անցընելով՝ քաշեց ե-
րեխայն ինչուան եկեղեցւոյն գուոր,
աստիճաններուն վրայ ձգեց մերկացուց,
մորթեց, տարաւ թաղեց ուրիշ եկեղե-
ցայ մը մէջ: Անսվ մարեցաւ Հերակ-
լեան ցեղն, ամբողջ գար մը ինքնակա-
լելով վեց թագակիրներով. որոց վերջ-
նոյն (Յուստինիանու) տգեղ զլուեին՝ յետ
խայտառակուելու ՚ի Կ. Պօլիս՝ զրկուե-
ցաւ մինչեւ ՚ի Հռովի՛, և հօն ալ ժողովըը-
դեան ուրախութեան պատճառ եղաւ:

Այս ուրախութիւնը երկարատև չը-
րաւ վարդան, ինչպէս կու յուսացուէր.
վասն զի իր խոստմանը վրայ շարաշար
հաւատարիմ կենալով՝ անհաւատարիմ
եղաւ իր պատւոյն և կրօնից. սուտ ճրդ-
նաւորին ըսածին համեմատ ջանաց միա-
կամենաց մոլորութիւնը ծաւալել յա-
րելեք բոլոր. ուղղափառ եպիսկոպոս-
ները հալածելով և մոլորեաներ զնե-
լով տեղերնին, ժողովակ մ'ալ ընել և
գատապարաել տուաւ Զ սուրբ Ժողո-
վը, և իր խելոր զիր մ'ալ գրեց ՚ի Հռոմ
առ սրբազն Հայրապետն, զոր ամենքն
արհամարհելով մերժեցին, և ինչուան
զէնք անլով իր խաւրած զօրքը ջար-
դել կուղէին, եթէ Ս. Պատի շարդե-
լուր: Միայն մէկ բարի հովափ մը խնա-
յեց վարդան. ասիկայ էր Ուաւեննայի
արքեպիսկոպոսն Փելիքս, զոր Յուստի-
նիանոս կուրացուցեր և աքսորեր էր ՚ի
Քերանն վարդանայ Հետ, որ պանզիսի-
տութեան և թշուառութեան ընկեր ու-
նենալով զնա՝ սէր կապեր էր հետը. և
ելր կայսր եղաւ՝ զարձուց իր աթոռը
շատ ընծաներով. (որոց մէջ կար պրզ-
տիկ ոսկեղէն թագ մը՝ անզին գոհար-
ներով զարդարած, որուն համար Հը-
րեայ մը ըսաւ յետոյ Մեծին կալարոսի՝
թէ բոլոր Ծաւեննայի չքնազակերտ մայր
եկեղեցին աւելի կ'արժէ):

իր երազին և երազահանին միայն հաւատացող և ինչուան կրծնքն ալ արհամարհոյն՝ ի հարկէ ուրիշ ազնիւ ըզդացմունքներ չէր կրնար ունենալ պէտք չէ փնտոել, թէ արդեօք յիշեց վարդան իր ծագումը, որ ցեղէ, որ ազգէ ըլլան, և ըրան բարեկ մը իր նախնական հայրենեացք: Ընդհակառակն կ'իմացընեն պատմիչք, որ նեղեց զչայս, և շատ գաղթական հանել տալով՝ ի Մեծ Հայոց՝ քեց Գ և Դ Հայոց կողմերը, որ են Մալադիա և Խարբերդ. որոց տիրելով Արարացիք՝ ընդունեցան և տեղ տուին Հայոց. ասոնք ալ յօժարութեամբ միաբանեցան զիրենք ընդունողաց հետ: Թերևս ասով աւմիլ քաջալերուեցան Արաբացիք Փոքր Ասիոյ զանազան կողմերը կոխելու, ինչպէս Բուղդարը ալ ինչուան կ. Պօլսոյ մօտ սահմանները աւրելու և այրելու: Վարդան՝ ոչ իր անուան, ոչ իր պատոյն և ոչ իր առջի տուած յուսոյն համեմատ՝ քաջութիւն ցըցուց ասոնց գէմ. այլ կարծես թէ իր երազածը և չերազածը ստուգել ուզելով՝ ինք զինքը թողուց բաղդին զիրէլ, և միայն անոր ցուցած փափկութեանցը մէջ թաղուեցաւ. իր նախորդն (Յուստինիանոս) անչափ բռնարարութեամբ և կոտորածներովը՝ անբաւ ստացուածք և հարստութիւն ժողովեր էր, որովք շատ քաղաքներ կրնային շինուիլ, և շատ բանակներ զինուիլ. Վարդան իր կայսերութեան մէկ ու կէս տարուանը մէջ՝ գրեթէ բոլորն ալ մսխեց, անչափ և անկարգ զեղիսութեամբ, որովք շատ խայտառակութիւն, զնաս և մեղք հասուց շատոնց. և եթէ զեռ արտաքին սիրուն կերպարանքը և ճարտար ու բանիբուն խօսուածքը պահած չըլլար, անշոշտ և ոչ այն 18 ամիսը կու թագաւորէր: Բայց ինքը մեծ յոյս ունէր՝ իր խարեբայ մարգարէին վստահացած՝ որ երկայն տարիներ զիտի կայսերութիւն վայելէ: — Սակայն եթէ այն կարծեցեալ տարիներն այլ այդպէս վատութեամբ պիտի անցընէր, պէտք է մեր ազգութեան և մարդկութեան պատոյն համար գոհ ըլլանք՝ որ յօյսը

պարապ ելաւ, և շուտով հասաւ իր երազին վերջը, կամ նոր և անակնկալ երազ մը, որ պատմութեան ամենէն հիացուցիչ և ահացուցիչ երևայթներէն մէկն է, կենաց նշանաւորագոյն յեղափոխութեանց մէկն, բարոյականի զարմանալի երազ մը. յորում կրնակք բովանդակ մարդուս բնութիւնը կամ փափազները նկատել՝ ի վարդան և խրատ առնուլ:

Աշխարհիս մէջ անշուշտ շատերն փափեր և երազեր են, բայց խիստ քիչ եղած են վարդանի նման այսպէս յանկարծօրէն և այսչափ մեծ փառքի, իշխանութեան և բարեաց հասնողը. երկու անգամ աքսորուած և շատ հեղիձագիւ մահուանէ ազատած, մանաւանդ անանկ բռնաւորի մը (Յուստինիանոսի) ձեռքէ, որուն զոհ եղան աւելի ապահովացն կեանքեր. և երկրիս ամենէն բարձր և փառաւոր գահոյիցը վրայ նըստած, որ այն ատեն դիպուածով մ'ալ (զոր վերն յիշեցի) անբաւ գանձով և հարստութեամբ լցցուած էր. զասոնք՝ անկարծ բաղդ գտնողի մը պէս անկուշտ կերպով վայելելը բաւական շահագերով, ուզեց վարդան (մէկ քանի շատ անուան եղած փափկակեաց և զեղիս մարդկանց նման) մէկ օրուան մէջ փորձել զգալ այն ամենայն բարիքը՝ որուն կը նայ բաղձալ մարդուս սիրուն և բնութիւնն, միայն ներկայ կեանքը մտածելով. մէկ օրուան մը մէջ բովանդակել իր աշխարհակալ կայսերութեան կարելի փառքը և վայելելը. այս եղաւ իր մեծագոյն երազն, որ ուզածին պէս սկսաւ, չուզածին պէս լմբնցաւ: Այն օրն էր Քրիստոսի թուականին 713 տարւոյն յունիս ամսոյն երկքը, Հոգեգալըստեան տօնին նախընթաց օրն (շաբաթ), զոր ումանք կ. Պօլիս քաղքին հիմնարկութեան օրն կ'ըսեն, և այն ժամանակի սպիրութեան համեմատ Քաղաքին Ենենդոց օրն¹, բայց ըստ այլոց նոյն ինքն վարդանայ ծննդոց տարեդարձ օրն էր: Այս օրս ուզեց իր ա-

ւուրց մէջ նշանաւոր ընել, և եղաւ ու զածէն շատ անդին . Նշանաւոր բարոր կայսերաց, դարուց, ազգաց և մարդկութեան աւուրց մէջ: Առտուն՝ քարդին մեծ կրկէսը՝ (Աթ մէյտանը) զարդարել տուած ըլլարով՝ մեծահանդէս և փառազարդ կառարշաւ մ'ընել տուաւ 'ի զուարձութիւն աշխարհախումք ժողովրդեան: յետոյ նոյնպէս մեծահանդէս և սիրալի հեծելութիւն՝ մը, յորում անշուշտ ինքն ալ իր անուան համեմատ՝² ահճպարանոց և սիրգաշարժ և ոսկէզարդ երիվարի մը վրայ նստած, աւելի իր նախնեաց սեփական ճարպիկ նստուածքով և վազուածքովը կ'ըզմայլցընէր տեսողները՝ քան իր և իր ձիուն և իրեն անմիջապէս քովին գացողներուն վրայի ակնախտիդ և մեծահարուստ զարդուց և սպառազինութեանց փայլմամբք. որովք՝ երկրիս երեսէն սահող արեւու մը պէս կ'անցնէր քաղքին մէկ ծայրէն մինչ՝ 'ի մէկայլ ծայրը. և շատ աշխարհականերու չըրպծ մեծութիւնը ցուցընելով՝ ինքն որ հազիւ աշխարհագիւտ կրնար ըսուկի, հազար հատ յաղթութեան և փառաց նշան դրօշներ օդուն մէջ բարձրացուցած տանել կու տար. հազար այլ երաժիշտ, մեծամեծ և բարձրաձայն փողերով և փանդրամբք՝ այնպէս կու թնդացընէին չորս դին, որ կարծես թէ ոչ քաղքին հիմնարկութիւնը հրոշակել՝ այլ անոր հիմերը դուրս հանել կ'ուզեն. փողերէն և փանդիոններէն աւելի կը տիրէր ուրախական և հանդիսական ձայն ժողովրդեան, որ իբր թէ առանց ոտքի հեղեղաբար հեծելոց քովին և ետևէն կ'երթային: Այն որ Կ.Պօլիս նեղ եկաւ իր ժողովրդեան, կայսերութիւնն՝ վարդանայ սրտին: Օրուան մէկ մասն փառաց փայլման և վայելից նուկրելով, մէկայլ մասն այլ փափկութեան վայելից պահուած էր. նախ գընաց մոտաւ Զեւսիկապեան չերմուկք ըստած բաղանիքը, որ կայսերական պա-

լատան և Ս. Սոփիայի միջոցն էր. յետոյ կարգն եկաւ կերուփումի, ուր երկայն ժամեր անցուց իր պալատան մեծամեծաց հետ. և ինչ որ այնպիսի օրուան մը համար կրնայ մոտածուիլ և պատրաստուիլ կար սեղանոյն վրայ, 'ի հարկէ չափէն շատ և շատ աւելի. ուր նստած ատենն՝ վարդան դեռ վարդան կայսրն էր, սիրտն առջինէն աւելի ուռած մեծցած, թերեւս քան զնաբուգողնոսոր և զբաղտասար մեծափառք և մեծավայելք կարծելով զինքքը. իսկ անկէ ելած ատենն, աւազ, ոչ թէ արևելքի կայսեր, ոչ թէ Մշց գեղի մը յետին վարդանին չորհքն այլ չկար վրան, այլ կ'ամաչեմ ըսելու՝ թէ նուաստացեր էր քան զանբան. խուկած խանգրած տիկ մ'էր գարծեր, աւելի զինուով քացխած քան կերակրով փրուած: Այսպէս լմբնցաւ ցորեկուան հանդէսն՝ երկըննալով 'ի մէջ ջահերու գիշերուան. որոյ մէկ հատիկ հարկաւոր վայելք պիտի ըլլար խոր և երկար քուն մը. որու մէջ յիրաւի ընկաւ թաղուեցաւ շատ խոր, թէ և ոչ շատ երկար:...
Բայց ով մարդկային բնուկթիւն, այդ պէս մեծապէս պատուեալ քու հաստողէդ յԱստուծոյ, քու բարակ և հրեշտակամօտ ազնուութիւնդ բնչպէս կըրնայ այսչափ թանձրանալ և կուպտատարազ խոզի ու վարազի երեսյթ մ'առնուլ. մանաւանդ թէ անոնց բարքն և ախորժակը՝ քան թէ կուտ կերպարանքը: — Այս էր քու երկայն ատենն երկնած երազդ, ով յանկարծարազդ կայսր վարդան. այս էր քու անդրածայրագոյն փառքդ և վայելքդ: — Տառապեալ մարդկի իրենց տառապանաց և օրական աշխատանաց ու տրտուութեանց անոյց գեղ մը միիթարութիւն մը կու դտնեն գիշերուան քունը. քեզի՝ այդ մէկ ցորեկուան վայելքդ ու մնիսած զան ձերդ որ կրնար հազարաւոր ընտանիք երջանիկ ընել, քանի ծանր ու տխուր պիտի ըլլայ. անոնք դրնէ այն ատեն տեսած սուս երազներով պահ մը կու սիրփին, քու սոոյդ երազդ քեզի հրչափ անտանելի պիտի ըլլայ, երբ աղէկ

1 Cavalcade, ՏՏ. Պիտիւ:

2 Փիլիպպոս Ձիակէ ըսել է:

մարթըննաս... Արթընցիր, ով վատարաղդ վարդան, ով կարճօրեայ կայսրը. վասն զի ահա քու վերջին խնջյից տաճարիդ պատէն այլ բաղասասարեան ձեռք մը դրւս ելած՝ կու գրէ կայսրութեանդ, փափկութեանդ և ամենայն բարեացդ վերջ ու վախճան։ կամ գոնէ, եթէ կրնաս, դարձեալ երազէ, գլխուդ նոր գալիքը. մտիկ դիր պահ մը խղճիդ. լսէ եկեղեցւոյ և ժողովրդեան մէջ ծածուկ փսփսուք մը, տհաճութիւն մը, գանգատ մը, սպառնալիք մը քեզի դէմ. զգա մեծամեծ իշխանաց դառնութիւնը և ոլսը՝ իրենց և իրենց կանանց հասուցած անարդութեանդ համար. սարսէ այն պարկեշտ հաւատաւորաց սրտագոյ աղօթքէն՝ որ իրենց աստուածանուէր կուսութեան և առանձնութեան վասաներուդ վրէժը կը պահանջեն յերկնից։ թնդա մէկ մը անորոտմունքէն՝ որ թրակիոյ վրայէն գոռալով քեզի կու մօտենայ. հոն է գէորդ թորափ (գուցէ քեզի պէս արևելցի մը), վարազբակուրի տեղ Օպսիկիոնի¹ կուսակալ եղողն, որ վրադ կու խարէ քու դաշիճդ։ Եւ ահա այդ քու կենացդ և շատերու կենաց ամենէն մեծ և փափուկ օրուան հանդիսից մէջ գողի կամ ցեցի պէս ծածուկ կու մօտենայ քու երջանկութեան թելդ կրծելու կտրելու... արդէն պալատիդ չորս դին քննելով՝ համարձակ մուսք գտաւ. վասն զի քու պահապաններդ այլ քեզի պէս դինով խելագարած՝ զքեզ թողեր զիրենք քնոյ կամ հեշտութեան տուեր են... ահա հասաւ ինչուան քու ներքին սենեակներդ, քու ննջարանիդ, քու անկողնոյդ... Ո՛հ, հիմայ արթընցիր ըսենք արդեակ, թէ քնացիր առանց լինաւ արթըննալու...

Դեռ կու խոկար թանձր քնոյ և յոդնութեան մէջ աւաղելի կայսրն վարդան. դեռ ինքն ներսէն ուրիշ երազ կու տեսնէր, դրաէն իր վրայ ուրիշ երազ կու տեսնուէր. և գեռ շատ ուշ

¹ Միուն կուսակալութեան որոյ գաւառներն էին Փոխւդիս, Միւսիս, Բիւթինիս։

սասափիկ ցնցումէ մը թօմուելով բացաւ աշուրները... Ո՛վ ահաւոր վայրկեան, թէ և կարճ այն մէկ ակնթարթի մէջ որչափ բաներ տեսաւ և իմացաւ. ինչ նորանշան և կսկծալի երազ, մանաւանդ թէ 13 տարուան տաքուկ երազոց վերջ՝ ինչ ցրտասարտուու արթնութիւն։ Անկարելի անրացատրելի ափշութիւն, զարմանք, կիրք, վախ և այլափոխութիւն. — մէկ վայրկենին մէջ՝ մէկ մը անցուցած օրը և քնոյն անկողինը յիշց, մէկ մ'ալ տեսաւ որ անկողնոյ տեղ՝ մեծ վերարկուի մը միջէն գործ կ'ենէ, (որով զինքը պլեր բերեր էր հոն Ռուպրոս՝ Բորափոսի պաշտօնեայն.) փոխանակ իր պալատան ջահերուն՝ այլանդակ լոյսեր կը շարժէին չորս դին. փոխանակննարանին՝ նորարձակի ձիարձակարանը, ուր ինքն սկսեր էր այն օրուան մեծ հանդէսը. փոխանակ իր ոպասաւրաց՝ դահճաղէմ մարդիկ. փոխանակ իր փափկութեան սպասուց՝ սոսկալի սուրեր։ ... ի՞նչ, ովկ, ուր ... ըսել չմնաց. իրան թէ սուս, երազ թէ արթնութիւն. ինչ նոր աշխարհ կ'երեւի աշքերու։ ... Եւ ահա նոյն իսկ վայրկենին սև և անբացուելի վարագոյր մը զամեն բան ծածկեց աշքերէն, եթէ դեռ կրնացին ազք ըսուկի անոնք, որ պահիկ մ'առաջ թանձրամած քնով գոցուած էին, հիմայ արեամբ և յափտենական մը թուլթեամբ կլզեցան։ ... Երկու սայրա, ուր երկաթ՝ ջուխտակ կայծակներու պէս իջան զարկին, դուրս ցատքեցուցին բիբերը. — քանի մը կաթիլ չորցած արեան և երկու պդդափի վէրք լցին այն խարկած ու խաւարած փոսերը՝ որոնց երէկ առտուն բոլոր աշխարհիս մեծութիւնը և գեղեցկութիւնը քիչ կու գար, հիմայ անոնց ամեն զբօսանքէն և հեշտութիւններէն՝ հազիւ քանի մը գըժուարածին արտասունքի կաթիլ մնաց միսիթարանք։ . . .

Այսպիսի ահեղ փոփոխութեան վըրայ կարծես թէ ինքնին դէպքն կամ պաղմութիւնն այլ հիացած՝ լոեց ծածկեց, և ինչուան հիմայ չէ յայտնած այն վայրկենէն ետև մեր կուրացեալ կայ-

սերինչ եղած ըլլալը . իրեն՝ ուրիշ կերպով, մեղի և բոլոր աշխարհիս ուրիշ կերպով խրատ և զարմանք թողլով այս նորանշան պատահարը, Փիլիպպիկոսի Վարդանայ ստոյգ կարծած երալը, երազ կարծած ստուգով թիւնը :

Զբարիս գործել մի՛ ձանձրանայք .

Ազնուական գթասիրա մարդ մը իր տասուերկու տարեկան զաւկին հետ զրօսանքի երթալու ատեն, կը հանդիպին ողըմելի մարդու մը, որուն վրան զլուխը պատրուած խոցերով լցուն՝ ճամբուն վրայ նստած կը մուրար : Տըղան աս խեղճ տեսածին պէս, Հայր, սա նայէ, կ'ըսէ, ու երեսը մէկդիդարձնելով կ'ուզէ հեռանալ ան ողըմելի տեսարանէն : Հայրը, կեցիր, կ'ըսէ, որդեակ . Ած զմեզ ասխեղծին համար հոս դրկեց, որպէս զի ձեռքերնէս եկած բարձրէն ընենք . եկու մօտեցիր հարցուր իրեն, թէ ինչէն ատ խեղճովթեան մէջ ընկեր է, ու ով ունի զինքը նայող, դեղին կարօտութիւն ունի թէ կերակրոյ : — Հայր, ես չեմ կրնար անոր քովը երթալ, ինչպէս այդ բաները հարցընեմ . տեսածիս պէս սիրոս տակնու վրայ եղաւ : — Ձէ տղաս, ատանկ բան մի զրուցեր . սիրտ ըրէ գնա հարցուր ըսածներս, ու աղէկ մ՞ալ նայէ վրան, մտքով ալ դարձիր քու վրադ նայէ, և չնորհակալ եղիր Աստուծոյ՝ որ զքեզ ողջ առողջ պահեր է ու աս կերպ խեղճութեան մէջ ալ չէ ձգեր : Աս ըսելով կ'առնէ հայրը զաւակը ու կը մօտենան խեղճ աղքատին, որ գորդըղարով ու խեղճութիւնը ցուցընելով օգնութիւն կը խնդրէր անոնցմէ : Հայրը զաւակին կը սէ . Հարցուր տղաս, աղքատին, թէ ինչէն ատանկ եղիր է . ու ինչ բանի կարօտութիւն ունի . վասն զի ասանկ ներուն ողըմելը՝ ու իրենց կարօտութեան օնսելը, Աստուծոյ մէկմէկ մեծ զոհ ընել է : — Իիստ բարի, հայր, կ'ըսէ զաւակը, ու կը դառնայ աղքատին կը

հարցընէ . Խեղճուկ եղբայր, ինչէն ատանկ եղեր ես, ինչ բանի կարօտութիւն ունիս . հայրս կ'ուզէ քեզի ոգ նել . ինչ բանի պէտք ունիս նէ զրուցէ . մի պահեր : Այն ատեն աղքատոր կը դառնայ հառաջանքով մը կ'ըսէ . Ո՛վ գթասիրտ մարդիկ, Աստուծած զծեղ զըրկեց ինձի . ես ձեզի պէս ողջ առողջ մարդ էի . ետևէս առջևէս ձառնաներ կ'երթային կու գային . վրաս հիւանդութիւն մ'եկաւ . իրկը տարի անկողնէն վրցայ ելլալ . բոլոր ունեցածս բըմիկնալուն տուի, ամեննին օգուտ մը չգտնալուն վերջը՝ վրաս խոցեր ելան . երկու տարիի է ահա աս վէրքերուն մէջը կը չարչարուիմ . իմ ստակիս բարեկամները ստակիս հետ մէկտեղ ինձմէն փախան . ես ասանկ խեղճ մնալով՝ ոտքը ձեռքը բոնով մէկ մուրացկան մը գտայ որ առտուն իրիկուն զիս հոս կը բերէ ճամբուն վրայ կը ձգէ ու կը տանի իր խցիկը . վասն զի խոցերուս պատճառաւ քալել ալ չեմ կրնար . անցնող դարձողներն ինչ որ ձեռքս կ'ինկնայ հացիկ կ'առնեմ կ'ուտեմ, ու ան աղքատին ալ ձեռքէս եկածին չափ կ'օդնեմ : Այսօր դուն եղար առջինը, որ ինձի կը հարցընես, թէ ինչ կարօտութիւն ունիմ . շատ բանի, տէր իմ, բայց ամենէն առաջ քիչ մը սպեղանի, որ վէրքերուս քսելով կարելի է թէ քիչ մը բժշկուիմ :

Աս խեղճին խօսքերէն տղուն սիրու չդիմանալով հօրը կ'ըսէ . Հայր, ինչ ընենք ասոր որ ըսենանայ մեզի պէս ըւլայ : Աս ըսենով արցունքը չէր կրնար բռնել : Հայրը, Միւլ լար, որդեակ, կ'ըսէ, գնա դեղավաճառը հոս կանչէ, որ անոր յանձնենք աս խեղճը հոգալու : Արցունքը սրբելով կ'երթայ կը բերէ զեղավաճառը . ու հայրը անոր յանձնելով ամեն պէտք եղած բաները հոգալու, քիչ մ՞ալ ողորմութիւն տալով՝ կ'երթան տեղերնին : Ամիս մը չանցնիր մարդը բոլորովին ըունտնալով՝ կ'երթայ իրեն ողըմածին տունը կը գըտնէ, ինչուան գետին երկրպագութիւն ընելով չնորհակալ կ'ըլլայ անոնց, ու